ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դումայի պատմական միսսիան.—Ուրուսովի մերկացումները, Բելոստոկի ջարդը բնող յանձնաժողովը եւ առաջին օրէնսդրական ակտը՝ մահուան պատժի վերացումը.—Մեծ եւ փոքր բաօս.—Բոնի ոյժի չէզոքացումը ընտրութիւններից.—Բառանցում ընտրութիւնն է մեզ հարկաւոր:

—

Յեղափոխութիւնից վայրիվերոյ եղած կեանքը այժմ ներկայացնում է հին մեռնող կարգերի ու սկզբունքների և նորաբողբոջ կարգերի ու ազատագրութեան ըմբոստ ձգտումների եռուն մի խառնուրդ, մի քաօս։ Դոյութիւն ունեցող ըէալ ոյժերի համագումարը ստեղծեց մի ընդդիմադիր Դուսա, որի պատմական կոչումն է՝ դուրս բերել քաօսային շրջանի մէջ հեծող երկիրը դէպի զարգացման ուղիղ, խաղաղ ճանապարհ։ Եւ Դուման աստիճանաբար իրագործում է իր միսսիան։ Նրա հաստատակամ տակտիկան քայլ առ քայլ վերցնում է բիւրօկրատիայի ամրութիւնները, ոչնչացնում գիտութեան և արդարութեան խորտակող քննադատութեամբ բիւրօկրատիայի բոլոր սուտ ու մուտ առարկումները, մերկացնում նրա իշխանութեան ամբողջ գարշանքը։ Եւ Դումայի օրէցօր աճող հեղինակութիւնը ժողովրդի մէջ ստեղծում է այնպիսի բարոյական ոյժ, որի առջև ստիպուած են արդարանալ, նուաստացած ոճով խօսել երեկուայ բռնապետները։ Այն մերկացումները, որ արաւ իր այսուհետև պատմական ճառում ներքին գործոց մինիստրի նախկին օգնական իշ. Ուրուսովը յունիսի 12-ի նիստում, այն ընդունելութիւնը որ ցոյց տուաւ Դուման զինուորական ընդհանուր դատախազ գէներալ Պաւլովին (յունիսի 19-ին) բղաւելով նրա երեսին—«Դուրս, դահիճ, մարդասպան, աւելի լաւ է ընդհատել նիստը քան լսել Շմիդտի դահճին»—ստիպելով հեռանալ դահլիճից. այն դերը որ կատարեց Դուման իր՝ ընտրած յանձնաժողովի միջոցով՝ քննելով Բելոստոկի ջարդերում վարչութեան, պոլիցիայի և զօրքի կատարած դերը—վերջապէս այն առաջին օրէնսդրական ակտը, որ ընդունեց Պետական Դուման յունիսի 20-ին, միաձայն որոշելով վերացնել մահուան պատիժը—այդ բոլորը

ապացոյց են որ Պետական Դուման ընդունակ է իրագործելու իր պատմական մեծ կոչումը։ Նրանից դուրս այժմ կեանքը չի կարող ստեղծել այլ մարմին, որ անարխիայի կամ զինուորական դիկտատուրայի վտանգից ազատի այդ լայնածաւալ, տարբեր կուլտուրաների և ցեղերի վիթխարի զանգուած Ռուսաստանը։ Անպատասխանատու մինիստրութեան օրերը հաշուած են, և այդ յաղթանակը կը տանի Դուման, որովհետև քաղաքական ազատութիւն ձեռք բերելու կռւում Դումայի բոլոր առաջադէմ տարրերը գործում են միահամուռ ոյժերով։

Լսելով Կովկասից եկած հայ, վրացի, Թուրք և լեռնական պատգամաւորների ճառերը, որոնց մէջ դուրս էին բերւում ռուս խայտառակ բիւրօկրատիական րէժիմի արարքները «աւերակ դարձրած մի հրաշալի երկրում», լաւ էր նկատել մի ռուս պատգամաւոր թէ «երբ մենք ռուսներս վատ էինք ապրում, վատ էր և ձեր կեանքը, կը բարուոքուի մեր կեանքը, կը լաւանայ և ձեր վիճակը»։ Արդարև, մեր բոլոր ցաւերի և դժբախտութիւնների հիմնական պատճառը հին կարգերի մէջ է, որոնց վերացումը միայն կ'ազատի մեզ կամայականութեան զաւիրճիրաններից։ Այդ ճշմարտութիւնը այժմ հասկացել են և Թուրք ինտելիգենտները, որոնք մի քանի ամիս առաջ չէին ուզում խոստովանել Կովկասի իշխանութեան դրդող, մեղսակից դերը Թուրք-հայկական ոճրագործ ընդհարումների մէջ։ Լաւ է ուշ, քան երբէք։ Իսկ մինչև նրանք հասկացան այդ, «հրաշալի երկրի» մէջ սովը, թշուառութիւնը, վայրենացումը սաւառնում են կիսաւեր գիւղերի աւերակների վրայ, գազանային կըրքերը դեռ չեն հանդարտուել, սպանութիւնները, գերի վերցնելը իրարից դեռ շարունակւում են։

Ինչու Կովկասի պատգամաւորները չպէտքէ պահանջեն որ Դուման իր անդամներից ընտրած մի մասնաժողով ուղարկի մեր երկիրը, որը մի՞թէ մի Բելոստոկ չարժէ. ինչու չպէտք է դիմեն Դումային, որ մի քանի միլլիօն նպաստ բաց թողնուի մեր գիւղացիների տնտեսութիւնը վերականգնելու համար։ «Սոցիալիզմի» մասին այբուբենական ճշմարտութիւններ և միտինգային ճառամբանութիւններ արտասանելու համար չեն ուղարկուած Դուման մեր պատգամաւորները, այլ մեր երկրի կարիքների մասին դրական պահանջներ անելու։ Նախահաշուից դուրս այն 15 միլլիօնը, որ Դուման որոշել է սերմի և մատակարարութեան պէտքերի համար, պէտք է գործադրուի և մեր երկրի կարիքների համար։ Դրա մասին խօսք բարձրացրե՞լ են մեր պատգամաւորները, թէ ոչ։ Մեզ յայտնի որ նրանք լռել են։

Մեր կարիքները այնքան սոսկալի չափեր են ստացել որ Նպաստավատույցների չնչին օգնութեան վրայ յոյս դնելով գիւղացիներին կերակրել խոստումներով՝ անխղճութիւն է։ Պետական միջոցներով պէտք է բուժուեն այն ցաւերը, որոնք առաջ են եկել համարեա բացառապէս այդ պետութեան ապիկար, յանցագործ պաշտօնեաների շնորհիւ։

Այդ իրականութեան դիմաց մարդ իսկապէս սիրտ չունի խօսել այն համեմատաբար երկրորդական խնդիրների մասին, որոնք յուզում են մեր «հայկական կեանքը». դպրոցական ընտրութիւններ, ուսուցչական ժողովներ, հոգևորականների ընտրութիւններ, պատգամաւորական ժողով և այլ և այլն. բոլորը շուրջ եկեղեցու և դպրոցի։ Մեծ քաոսի մէջ ապրելով, դժուար է ազատ լինել փոքր քաոսներից, և այդպիսի քաոս, հնի և նորի խճճուած խառնվնթոր զանգուած է ներկայացնում և մեր կեանքը։

Գաղափարների, կուսակցական խնդիրների, հին կամայական կարգերի և նոր ձգտումների մի այնպիսի հանգոյց է դառել և մեր կեանքը որ նրանից դուրս գալու այլ հնարաւորութիւն մենք չենք գտնում, քան մի փոքրիկ Դուման, ժողովրդական ներկայացուցչութիւն հրաւիրելու։ Սակայն այստեղ պէտք է կանգ առնենք և աշխատենք սառն վերլուծելով տեսնել թէ ո՞ն է ժողովրդի անկախ կամքի արտայայտութիւնը և ինչ է կեղծած, ճնշման տակ, բռնութեամբ կորզած համաձայնութիւնը։

Յայտնի է թէ կամայականութեան բեժիմից դեռ իսպառ չազատուած երկրներում զանազան Ստամբուլոցներ, զանազան դիկտատոր օլիգարխներ իրանց սև հարիւրեակների միջոցով ինչպէս են ընտրութիւններ կատարել տալիս։ Ընտրութիւներ կեղծելու ամենավտանգաւոր ձևն է զինուած խմբերի միջամտութիւնը, և այդ է պատճառը որ բոլոր ազատ, դեմոկրատ երկրներում բռնի, զինուած ոյժը չէզոքացնում է ընտրական պայքարից։

Այդ պատճառով զօրքը, պոլիցիան Գերմանիայում, Ֆրանսիայում, Աւստրիայում, Ունգարիայում, Հոլլանդիայում, Իտալիայում, Միացեալ Նահանգներում և առհասարակ բոլոր դեմոկրատ երկրներում իրաւունք չունի մասնակցելու ընտրութիւններին, որովհետև բռնի, զինուած ոյժը միշտ կարող է ճնշել, միշտ գործ դնել իր ահաբեկող ազդեցութիւնը։ Զէնքը տրուում է պետութեան պաշտպանութեան կամ ժողովրդի ինքնապաշտպանութեան համար և ոչ նրան ճնշելու, ստրկացնելու նպատակով։

Ընդհանուր, հաւասար, ուղղակի գաղտնի ընտրութիւն

նշանակում է մեր՝ «հայ-լուսաւորականների» նկատմամբ՝ որ ամենի մի չափաւոր ծխական, կին թէ տղամարդ, իրաւունք ունի գաղտնի քուէարկութեամբ միայն մի ձայն տալ, ուղղակի պատգամաւոր յայտարարելով նրան, որին հաւանում է։ Ոչ ուղղակի, այլ շեղակի (косвенный) են կատարւում մեզանում ընտրութիւնները, նախ լիազօրներ ընտրելով, որոնց և յանձնում է պատգամաւորներ ընտրելու իրաւունքը։ Շեղակի ընտրութեան ժամանակ ժողովրդի և ժողովրդական ներկայացչութեան միջև կանգնում են միջանկեալ միջնորդներ, «լիազօրներ», մի խումբ մարդիկ, որոնց կամքը յայտարարւում է իբրև ժողովրդի կամք. դա կեծիք է, որովհետև այդ դէպքում պատգամաւորները պատասխանատու են դառնում լիազօրների և ոչ ժողովրդի առաջ։ Հետևաբար, ժողովրդի կամքը իմանալու համար պէտք է խիստ կերպով պահպանենք ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրութիւնները։

Նախընտրական պայքարում թոյլատրելի է իհարկէ պրոպագանդան, համոզելու բոլոր միջոցները, բայց ոչ երբէք բռնի ոյժ, ահաբեկումը, սպառնալիքը։ Իւրաքանչիւրը ժողովներում, մամուլի մէջ ազատ է իր մտքերը յայտնելու։ Իւրաքանչիւր կուսակցութիւն կարող է իր ծրագիրները, իր թեկնածուների անունները յայտարարել ի լուր ամենքի, սակայն բռնի ոյժ, ճնշում գործ դնել, զինուած խմբերի ահաբեկման միջոցների դիմել, նշանակում է ծաղրել, ոտնակոխ անել, կեղծել ժողովրդի կամքը։ Այդ իսկ պատճառով իւրաքանչիւր քաղաքական կուսակցութիւն, եթէ նա կանգնած է գաղափարական մաքուր հողի վրայ, երբէք իրան թոյլ չի տալ բռնութեան այդ ստոր զէնքներին դիմելու։ Այդ բոլորը պէտք է մենք ի նկատի ունենանք և ընտրութիւնների գործը հանենք այն տնային, կիսատպռատ ձևերից, որ մինչև այժմ եօլա էինք տանում։ Ընտրութիւնը պէտք է կատարուի ճիշտ պահպանելով այն բոլոր ձևականութիւնները, որոնք երաշխաւորում են իւրաքանչիւրի ազատ, անկախ կամքի արտայայտութիւնը։ Այլապէս դա ընտրութիւններ չեն այլ դիմակահանդէս, դեմագոգիայի և բռնութեան մի ճիւաղային պար... Ժողովուրդը ինքը պէտք է բողոքի իր կամքը բռնաբարողների դէմ և թոյլ չտայ որ իրան ստրկացնեն, ինչ անունով և գործում լինեն բռնի ոյժ բանեցնողները։ Կամքի, մտքի անկախութիւն նախ և առաջ! Sapienti sat.

Մենք առաջիններից ենք եղել որ պաշտպանել ենք այն միտքը թէ ժողովրդի ներկայացուցչութեամբ պիտի սահմանադրուին մեր ազգային-եկեղեցական գործերը (տես «Մուրճ»

№ 4-5)։ Ռուսաց մեծ յեղափոխութիւնը դիւրացրեց և մեր ներքին կեանքի յեղափոխութիւնը. կաթողիկոսը ինքնայօժար կամքով առաջ գնաց ժամանակի պահանջների դիմաց։ Այդ պայմաններում ինչպէս ընտրողական իրաւունքի կատարեալ ձևը թողած՝ անկատարով բաւականանանք։ Վեհափառ կաթուղիկոսի յունիսի 7-ին տուած կոնդակը մասամբ է միայն լուծում հարցը, որովհետև այդպիսի լուրջ գործ ձեռնարկելու ոչ մի նախապատրաստութիւն չի արուած, որպէսզի այս առաջին համառուսահայ ժողովրդական ընտրութիւնը կատարուի նոր, աւելի արդար և կատարելագործած եղանակով։ Վեհափառ կաթողիկոսի հրահանգը չափազանց հապճեպով է կազմուած և կարող է բազմաթիւ թիւրիմացութիւնների, անվերջ կռիւների պատճառ դառնալ։ Մինչև օգոստոսի 15-ը այնքան ժամանակ կար որ կարելի էր մշակել մի յատուկ յանձնաժողովի միջոցով աւելի մանրամասն և կատարեալ հրահանգ. փառք Աստծոյ ընտրական գործը այնքա՜ն նրբօրէն կատարելագործուած է Եւրոպայում որ հարկ չկայ սեփական տնայնագործական փորձերի։ Մենք առաջ եօլա էինք տանում գործը զանազան տէրտէրների և եպիսկոպոսների քաղաքահասարակական իմաստութիւններով, և քանի որ հարցերը պտտում էին զանազան տիրացուներ և հոգաբարձուներ ընտրելու անձուկ շրջաններում՝ մի կերպ համակերպւում էինք, իսկ այժմ ուզու՞մ էք մի փոքրիկ «պարլամենտ» ընտրել և հնացած, անկատար և կիսատ-պռատ տնային եղանակներով! Ողջունելով բոլոր սրտից Վեհափառ կաթուղիկոսի քայլը սկզբունքային տեսակէտով, մենք կը ցանկայինք որ նախ և առաջ մանրամասն մշակուէր ընտրողական պրօցեդուրան, ղեկավարուելով դեմօկրատ երկրների փայլուն փորձերով։

Նշանաւոր քայլը արուած է, մնում է որ Վեհափառ կաթողիկոսը կէս ճանապարհի վրայ չկանգնի և տայ ժողովրդին կատարեալ ձևի ընտրական իրաւունք, որից մոռացուած է ուղղակի անդամը։ Ինչպէս տալ ժողովրդին անկատար գործիք, երբ մեր դարը գիտէ աւելի նուրբ և կատարելագործուած միջոց ժողովրդի անկախ կամքը արտայայտելու։ Ցանկանք ուրեմն որ այդ երկրորդ քայլն էլ անուի և մենք ունենանք ճշտօրէն իրագործուող կատարեալ ձևի անկախ ընտրողական իրաւունք։

Այդպիսի կատարեալ ընտրողական սկզբունքով կազմած կենդրոնական ժողովը կը կազմի մեր ռուսահայերիս ազգային-եկեղեցական սահմանադրութիւն, որ կը ներկայացուի Պետական Դումային և այնուհետև կը դառնայ օրէնք. և արխիւ կը նետուի 1836 թուականի «պոլոժենիէն» իր բոլոր հինար-

կութիւններով։ Այլապէս չափազանց խախուտ և երերուն կը լինի մի սահմանադրութիւն, որի իրագործումը կախուած կը լինի հոգևոր իշխանութեան բարի կամքից։ Ք՞չ ունենք կաթողիկոսական կոնդակներով հաստատուած կանոններ, որոնց գործադրել չգործադրելը սրա նրա քմահաճոյքից էր կախուած։ Այդ է ճանապարհը որ մեզ կը հանի քաօսային շրջանակից։

Լ. Ս.

25 Յունիսի.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Խաթաբալա», Երգիծաբանական թերթ.—Յեղափոխական եռուն կեանքի արտայայտութիւններից մէկն էլ բազմաթիւ երգիծաբանական թերթերի ծնունդն էր։ Ամեն բանում մենք հայերս էլ, իհարկէ, ենթարկւում ենք ժամանակակից հոսանքներին և տրամադրութիւններին։ Պետերբուրգում լոյս տեսաւ «Սափրիչ» երգիծաբանական թերթի մի քանի համարները, սակայն մեր կեանքից հեռու այդպիսի հրատարակութիւնը այնքան էլ աջողութիւն ունենալ չի կարող։ Թիֆլիսում էլ սկսուեց հրատարակուել «Խաթաբալա» թերթը, որ հետևեալ կերպով է բնորոշում իր կոչումը, դիմելով «հասարակական մանր ու մեծ գործիչներին»։—«Խաթաբալա»-ի էջերում գունաւոր և անգոյն պատկերներով, խօսքով, առակով, հանելուկներով, ոտանաւորով և այլ նոյնանման այժմ խիստ արգելուած զէնքերով կռուելու ենք ձեր դէմ ամեն անգամ, երբ ձեր գործունէութեան մէջ կը նկատենք ձեզ համար պատուաւոր, իսկ մեր աչքում ծիծաղելի կամ պախարակելի մի գիծ»։

Նկարիչները՝ Ռոտտեր և Շլինգ առանձին փայլ են տալիս այդ թերթին։ Առանձին ուշադրութիւն դարձրէք, օրինակի համար, № 1-ում և 3-ում հայ-թրքական ընդհարումների սկզբնապատճառ և ֆինալը ներկայացնող պատկերները, որոնք գեղարուեստօրէն միայն վիշտ, արտասունք են յարուցանում և ոչ ծիծաղ։ Շատ սրամիտ է ծաղրած հայ բըժիշկի էվօլիւցիան ծնուած օրից մինչև Թղթախաղի կանաչ դաշտը (№ 3)։ Վատ չեն Դումայի և մեր հասարակական գործերի (հոգաբարձական ընտրութիւններ, բարեգործական ընկերութեան) մասին նըկարներն ու խծբծանքները։ Այն պախարակելի կողմերը որ խօսակցութեան առարկայ են—«Խաթաբալան» նորից շեշտում է, ընդգծում, աւելի ռելիեֆ դարձնում և ընդհանրացում։ Այդպիսի թերթի գլխաւոր արժէքը կայանում է անպայման շիտակութեան և անկախութեան մէջ.